

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 30-ԻՆ
ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին`**

Խորհրդի անդամներ`

- Մ. Վարդանյան ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
- Հ. Թովմասյան ՀՀ արդարադատության նախարար
- Կ. Մինասյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Հ. Բեգլարյան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
- Ն. Երիցյան ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ

Հրավիրվածներ`

- Ա. Մարտիրոսյան ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
- Կ. Արեյան Երևանի քաղաքապետի տեղակալ
- Վ. Տերտերյան ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
- Ա. Ջանջուղազյան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ
- Ֆ. Բաշոյան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
- Լ. Հունանյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
- Ա. Սարգսյան ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
- Ռ. Վարդանյան ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ

| | |
|------------------|---|
| Վ. Կտիկյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի խորհրդական |
| Կ. Բադայան | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար |
| Է. Ավետյան | ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն |
| Ս. Մելիք-Յուլյան | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի բաժնի պետ |

1. Աշտարակ-Թալին (Օրագիր 2) ճանապարհահատվածի երկշարքանի երթևեկելի մասի քառաշարք երթևեկելի մասի վերակառուցման, Երևան-Աշտարակ ճանապարհահատվածի վերակառուցման (Օրագիր 1) և Երևան-Արարատ (Օրագիր 1) ճանապարհահատվածի ճանապարհային անվտանգության բարելավման կապալառուի ձեռքբերման մրցութային փաստաթղթերում բերված մրցույթի պայմաններում և պայմանագրի հատուկ պայմաններում ԱԶԲ-ի կողմից առաջարկվող փոփոխությունների հաստատում

(Մ. Վարդանյան, Կ. Բադայան, Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրերի կառավարման խորհրդի արտահերթ նիստը հրավիրվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանի առաջարկությամբ:

5. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ Աշտարակ-Թալին (Օրագիր 2) ճանապարհահատվածի երկշարքանի երթևեկելի մասի քառաշարք երթևեկելի մասի վերակառուցման, Երևան-Աշտարակ ճանապարհահատվածի վերակառուցման (Օրագիր 1) և Երևան-Արարատ (Օրագիր 1) ճանապարհահատվածի ճանապարհային անվտանգության բարելավման կապալառուի ձեռքբերման մրցութային փաստաթղթերում բերված մրցույթի պայմաններում և պայմանագրի հատուկ պայմաններում ԱԶԲ-ի կողմից առաջարկվող փոփոխությունների նախագծին.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կ. Բադալյանին՝ ԱԶԲ-ի հաստատմանը ներկայացնել կապալառուի ձեռքբերման մրցութային փաստաթղթերում բերված մրցույթի պայմանների և պայմանագրի հատուկ պայմանների լրամշակված տարբերակը:

2. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի 2011 թ. ամփոփ բյուջեի ճշգրտված տարբերակի հաստատում

(Մ.Վարդանյան, Ս.Մելիք-Յուլյան, Տ.Սարգսյան)

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի 2011 թվականի ամփոփ բյուջեի ճշգրտված տարբերակը:

3. Ընդունել ի գիտություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ.Վարդանյանի հայտարարությունը այն մասին, որ ԱԶԲ-ի կողմից նախատեսվում է Պեկինում, Սեուլում և Ֆրանկֆուրտում կազմակերպել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի վերաբերյալ շնորհանդեսի անցկացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՆՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ